ՄԻԱՅՆ ԹԵ ԳՅՈՒՂՆ ԱԶԱՏԱԳՐՎԻ

ՀՅՈՒՍՈՒՆՑ ԱՆԴՐԱՆԻԿ. –ԼՂՀ Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի նախկին բնակիչ, բռնագաղթված, 69 տարեկան:

–Մարտակերտի ու Շահումյանի անկումից հետո, սրիպված ես ու կինս արտագաղթեցինք Հայաստան: Ահագին կով ու ոչխար, լավ տուն ու տեղ ունեինք մնաց թուրքերին: Հայաստան բռնագաղթվելուց հետո տեսա, որ մի լավ կովը «ժիգուլի» ավտոմեքենայի հետ են փոխում եւ նոր միայն հասկացա, թե ինչքան հարուստ եմ եղել: Եղածը եղած է լաց չեմ լինում, սովորություն էլ չունեմ կնկա լաց ու կոծ դնելու: Բայց դե փախստականի վիճակն էլ մի բան չէ: Մենակ էդ բառը, որ մուրս հնչում է, ներքնաշխարհս տակն ու վրա է լինում: Էլ չեմ ասում, թե մեզ հասանելիք մի կտոր հացի կտրոնը ստանալու համար ամսվա վերջերին քանի՞ մեծամեծ մարդու ոտքն ենք գնում: Էդքան հողերն էլ վերցնելուց հետո, չիմացա, թե մեր Կարմիրավանն ինչո՞ւ են թողել թուրքերի ձեռքին: Տղաներս էնտեղ կռվում են, դրա համար եմ պահանջելու նման խոսում: Մեկ–մեկ գալիս են ինձ տեսության, ասում եմ ա՛ շան տղերք, ձեր գյուղը Կարմիրավանն ազատագրեք, ձեր գյուղը թողել եք թուրքերի ձեռքին, ո՞ր մասում եք գնում կռիվ տալի: Ասում են մեզանով չի, Կարմիրավանի ազատագրման հրամանը հրամանատարությունը պիտի տա: Է, թող տա, ես ե՞մ տալու: Քաղաքի էս չորս պատերի մեջ սիրտս նեղվում է: Գյուղացի մարդ եմ, որ տեսնում եմ մեկն էր է անում կամ ծառն է ջրում սիրտս թունդ է լինում: Այ հա՛այ, ասում եմ ինքս–ինձ, բա Անդրանիկն էստեղ պարապ նստի՞:

Իմ համար ելքն էդ է: Իմ պապական գյուղի ազատագրումը թուրքի ձեռքից: Ախպեր, թող ազատագրեն, գնամ նորից տունս տարքեմ, այգիս կենդանացնեմ, ոչխար պահեմ, թթի օղի քաշեմ... Դուք էլ ջահելներով եկեք ու տեսեք, թե Անդրանիկն ի՞նչ խորոված անել գիտի:

Մի բան էլ եմ ուզում ասել: Ասում են հայը թանկանալու է: Էդքան էլ անգրագետ չեմ, գիտեմ ինչն–ինչոց է, բայց որ հայը թանկացնում է մարդիկ սոված կկուրորվեն: Եվ ճիշտ չեն անում նրանք, ովքեր միտինգներում, հավաքներում խոովություն են ուզում մտցնել ժողովրդի մեջ ընդդեմ Նախագահի ու նրա կողմնակիցների: Ի՞նչ են փոխելու...

Հներին հանելով, նորերին նշանակելով բան չի փոխվելու էս մեր Հայաստանում: Մարդիկ պիտի կարողանան իրենք էլ փոխվեն: Արտաքինից նայում ես մարդը համեստ է, խելոք է, իբր թե ազնիվ է: Բայց հենց մի պաշտոնի ես նշանակում, սկսում է ոտատակ անել ունեցած իր նկարագիրը: Հիմա դուք ասեք, ո՞րն է ունեցած մեր թերությունը: Եվ էդ էլ ասեմ, որ հային դժվար է ղեկավարել: Շատ գիտուն ենք բան չունեմ ասելու, բայց թվում է, թե դիմացինից ավելի գիտուն ենք: Ու էդ է, որ իրար հետ ոլա չենք գնում: Տարիքով մարդ եմ, շատ բան եմ տեսել ու կասեմ, որ ելքը միակն է իրար պահելը: Մենք, որ իրար չպահեցինք, չհարգեցինք ուրիշը չի անի:

Գրի առավ
Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԸ